

HackensackUMC Pascack Valley Medical Center

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուժի մեջ մտնելու օրը՝ 1 հունվարի 2017թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ/ԴՐՈՒՅԹՆԵՐ

HackensackUMC Pascack Valley Medical Center-ի («Կազմակերպություն») քաղաքականությունն է՝ ապահովել սոցիալապես արդար գործելակերպ՝ Կազմակերպության հաստատություններում շտապ օգնության և բժշկական տեսանկյունից անհրաժեշտ այլ խնամք տրամադրելու համար: Այս քաղաքականությունը հատուկ մշակված է՝ զբաղվելու ֆինանսական աջակցության իրավունակությամբ այն հիվանդների համար, ովքեր ֆինանսական աջակցության կարիք ունեն և խնամք են ստանում Կազմակերպությունից:

1. Բոլոր ֆինանսական աջակցությունները կարտացոլեն մեր նվիրվածությունը ընդհանուր բարօրությանը, մեր առանձնահատուկ մտահոգությունը աղքատության մեջ և այլ խոցելի իրավիճակներում ապրող անձանց նկատմամբ, ինչպես նաև մեր հավատարմությունը խնամքի կառավարման նկատմամբ:
2. Այս քաղաքականությունը վերաբերում է Կազմակերպության կողմից տրամադրվող բոլոր շտապ օգնության և բժշկական տեսանկյունից անհրաժեշտ այլ ծառայություններին, ներառյալ մեզ մոտ աշխատող բժիշկների ծառայությունները և վարքագծային առողջությունը: Այս քաղաքականությունը չի վերաբերում վճարման պայմանավորվածություններին ընտրանքային բուժօգործողությունների կամ շտապ օգնություն չպահանջող կամ այլ կերպ բժշկական անհրաժեշտություն չհանդիսացող խնամքին:
3. Ֆինանսական Աջակցության Քաղաքականության շրջանակներում աշխատող Մատակարարների ցանկը տրամադրում է բոլոր մատակարարների ցանկը, ովքեր խնամք են տրամադրում Կազմակերպության հաստատություններում, և հատուկ նշում է, թե որոնք են ներառվում ֆինանսական աջակցության քաղաքականության մեջ, և որոնք՝ ոչ:

Սահմանումներ

Այս քաղաքականության նպատակներով՝ կիրառվում են հետևյալ սահմանումները՝

- «**501(r)**» նշանակում է Ներքին Եկամուտների մասին օրենքի Բաժին 501(r) և դրա հիման վրա հրապարակված կանոնակարգերը:
- «**Հիմնականում Հաշիվ ներկայացված Գումար**» կամ «**AGB**» նշանակում է, շտապ օգնության կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամքի վերաբերյալ, ապահովագրական ընկերության կողմից նման խնամքի համար ապահովագրություն ունեցած անձին հիմնականում հաշիվ ներկայացված գումար:
- «**Համայնք**» նշանակում է **Նյու Ջերզի նահանգի աշխարհագրական տարածք**
- «**Շտապ օգնության Խնամք**» նշանակում է երկունք կամ նման լրջության բժշկական վիճակ, որ անմիջական բժշկական ուշադրության բացակայությունը կարող է ողջամտորեն հանգեցնել հիվանդի (կամ չձեռնարկված մանկան) առողջության լուրջ վտանգին, մարմնի ֆունկցիայի լուրջ խախտման կամ մարմնի օրգանի կամ մասի լուրջ դիսֆունկցիայի:
- «**Բժշկական Տեսանկյունից Անհրաժեշտ Խնամք**» նշանակում է խնամք, որը վկայագրված բժշկի կողմից խորհրդակցելով ընդունող բժշկի հետ, որոշվել է, որ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է:
- «**Կազմակերպություն**» նշանակում է HackensackUMC Pascack Valley Medical Center:
- «**Հիվանդ**» նշանակում է այն անձինք, ովքեր ստանում են շտապ օգնության կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամք Կազմակերպությունում, ինչպես նաև անձինք, ովքեր ֆինանսապես պատասխանատու են հիվանդի խնամքի համար:

Տրամադրված Ֆինանսական Աջակցություն

1. Հիվանդներն, որոնց եկամուտն ավելի պակաս կամ հավասար է Դաշնային Աղքատության Մակարդակի («FPL») 200%-ին, իրավունակ կլինեն բարեգործական խնամքի այն ծառայությունների 100%-ի գեղջման համար, որոնց համար Հիվանդը պատասխանատու է՝ սպահովագրողի կողմից վճարումից հետո, եթե այդպիսին կա:
2. Հիվանդներն, որոնց եկամուտն ավելի բարձր է Դաշնային աղքատության մակարդակի («FPL») 200%-ից, իրավունակ կլինեն բարեգործական աջակցության համար՝ հիմնված ստորև ներկայացված չափանիշների՝

<u>Եկամտի Չափանիշ</u>	<u>Գումարի Տոկոս՝ Վճարված Հիվանդի կողմից</u>
Եկամուտ, որպես Տոկոս՝ <u>HHS Աղքատության Եկամտի Ուղեցույցների</u>	
Ավելի պակաս կամ հավասար 200%	0%
Ավելի մեծ, քան 200%, սակայն ավելի փոքր կամ հավասար 225%	20%
Ավելի մեծ, քան 225%, սակայն ավելի փոքր կամ հավասար 250%	40%
Ավելի մեծ, քան 250%, սակայն ավելի փոքր կամ հավասար 275%	60%
Ավելի մեծ, քան 275%, սակայն ավելի փոքր կամ հավասար 300%	80%
Ավելի մեծ, քան 300%	100%

3. Եթե սողացող գումարի սանդղակի 20%-ից մինչև 80%-ի հիվանդները պատասխանատու են իրենց գուտ տարեկան եկամուտը 30%-ով գերազանցող որակավորված գրպանից վճարվող վճարված բժշկական ծախսերի համար (օրինակ՝ այլ կողմերի կողմից չվճարված հաշիվներ), ապա 30% գերազանցող գումարը համարվում է հիվանդանոցային խնամքի վճարման աջակցություն:
4. Ֆինանսական աջակցության համար իրավունակությունը որոշվում է եկամտի ցիկլի որևէ պահի համար և կարող է ներառել կանխատեսելի գնահատման օգտագործում՝ իրավունակությունը որոշելու համար, չնայած որ հիվանդը չի լրացրել ֆինանսական աջակցության ձևաթուղթը («FAP դիմում»):
5. Ֆինանսական աջակցության համար իրավունակությունը պետք է որոշվի որևէ մնացորդի համար, որի համար պատասխանատու է ֆինանսական կարիքներ ունեցող հիվանդը:

Բարեգործական Խնամքի Ծրագիր.

- Նյու Ջերզիի Հիվանդանոցային Խնամքի Համար Վճարման Աջակցության Ծրագիրը (Բարեգործական խնամքի աջակցություն) անվճար կամ նվազեցված արժեքով խնամք է, որը տրամադրվում է հիվանդներին, ովքեր ստանում են ստացիոնար կամ ամբուլատոր ծառայություններ սուր խնամքի հիվանդանոցներում Նյու Ջերզի նահանգի տարածքում: Հիվանդանոցային աջակցությունը և նվազեցված վճարով խնամքը հասանելի են միայն անհրաժեշտ հիվանդանոցային խնամքի համար: Որոշ ծառայություններ, ինչպիսիք են՝ բժշկի վարձերը, անեստեզիոլոգիայի վարձերը, ճառագայթաբանության մեկնաբանությունը և ամբուլատոր դեղատոմսով դեղերը, տարբեր են հիվանդանոցային վճարներից և կարող են իրավունակ չլինել վճարի նվազեցման համար:
- Հիվանդանոցային խնամքի վճարման աջակցության ֆինանսավորման աղբյուրը հանդիսանում է Առողջապահական Խնամքի Սուբսիդավորման Հիմնադրամը, որն իրականացվում է 1997թ. Հանրային օրենքի Բաժին 263-ով:

Այլ Աջակցություններ այն հիվանդների համար, ովքեր իրավունակ չեն ֆինանսական Աջակցության համար

Հիվանդներն, ովքեր իրավունակ չեն ֆինանսական աջակցության համար, ինչպես նկարագրված է վերևում, դեռևս կարող են որակավորվել Կազմակերպության կողմից առաջարկվող աջակցության այլ տեսակների համար: Ամբողջական լինելու նպատակով, այս այլ տեսակի աջակցությունները նշված են այստեղ, սակայն

դրանք հիմնված չեն անհրաժեշտության վրա և նախատեսված չեն ենթարկվելու 501(r)-ին, բայց ներառվում են այստեղ HackensackUMC Pascack Valley Medical Center-ի կողմից սպասարկվող համայնքի հարմարության համար:

1. Չապահովագրված Հիվանդներին, ովքեր իրավունակ չեն ֆինանսական աջակցության համար, կտրամադրվի գեղջված սակագին՝ հիմնված հետևյալ չափանիշների վրա՝
 - (a) Ստացիոնար բուժգործողություններ. Medicare-ի Սակագնի 100%
 - (b) Շտապ Ոգնության Բաժանմունքի այցելություններ. Medicare-ի Սակագնի 115%
 - (c) Ընտրանքային Երթելիկ բուժգործողություններ. Medicare-ի Սակագնի 200%
 - (i) Սանկարաբժական և Կոսմետիկ բուժգործողությունները հիմնել են ինքնուրույն վճարվող վարձի ժամանակացույցներ և ենթական չեն Medicare-ի փոխհատուցման հիման վրա սահմանված սակագների:

Ֆինանսական Աջակցության համար Իրավունակ Հիվանդների համար Գանձումների Սահմանափակում

Ֆինանսական Աջակցության համար իրավունակ հիվանդներից անձամբ չի գանձվի ավելին, քան շտապ օգնության և բժշկական տեսանկյունից անհրաժեշտ այլ խնամքի AGB-ն և ոչ ավել, քան բոլոր այլ բժշկական խնամքների համար գանձումները: Կազմակերպությունը հաշվարկում է մեկ կամ ավելի AGB տոկոսներ՝ օգտագործելով «հետ նայելու» մեթոդը, ներառյալ Medicare-ի վճարովի ծառայությունը և մասնավոր առողջության ապահովագրությունները, որոնք պահանջների դիմաց վճարում են Կազմակերպությանը, բոլորը՝ համաձայն 501(r)-ի: AGB-ի հաշվարկման նկարագրության և տոկոսների անվճար օրինակը կարող էք ձեռք բերել ընդունարանում: Հիվանդները կարող են խնդրել նաև AGB-ի հաշվարկների և տոկոսի անվճար օրինակը փոստով՝ զանգահարելով Հիվանդների ֆինանսական ծառայություններին՝ (201)383-1043 հեռախոսահամարով՝ խնդրելու համար, որպեսզի օրինակն ուղարկվի Հիվանդի փոստային հասցեին:

Ֆինանսական աջակցության և այլ աջակցությունների համար դիմելը

Հիվանդը կարող է որակավորվել ֆինանսական աջակցության համար կանխատեսելի գնահատականի իրավունակության միջոցով կամ դիմելով ֆինանսական աջակցության համար՝ ներկայացնելով լրացված FAP դիմումը: FAP դիմումը և FAP դիմումի հրահանգները հասանելի կլինեն ծառայության ժամանակ հիվանդի պահանջի դեպքում: Եթե հիվանդը ցանկանում է դիմել ֆինանսական աջակցության համար ծառայության օրվանից/օրերից հետո, Հիվանդը կարող է մուտք գործել FAP դիմումաձև և FAP դիմումի հրահանգներ և տպել դրանք ուղղակի HackensackUMC Pascack Valley-ի կայքից: Հիվանդները կարող են նաև խնդրել FAP դիմումաձևը և FAP դիմումի հրահանգները փոստով: Փաստաթղթի օրնակները փոստով խնդրելու համար, Հիվանդները պետք է զանգահարեն Հիվանդների ֆինանսական Ծառայությունների բաժին՝ (201)383-1043 հեռախոսահամարով: Վերոհիշյալ յուրաքանչյուր հասանելի վայրում, FAP Դիմումաձևն ու FAP դիմումի հրահանգները հասանելի են և՛ անգլերեն, և՛ իսպաներեն լեզուներով:

Հիվանդներից հավաքագրման ժամանակացույց. Իրթելեկ և Ներագրված Ծառայություններ

HackensackUMC Pascack Valley Medical Center-ը տրամադրում է հաշվի հայտարարագրեր ծառայությունների համար, որոնք մատուցվել են այն բանից հետո, երբ ապահովագրությունն արդեն մշակել է պահանջը կամ անմիջապես՝ առանց ապահովագրության հիվանդների համար:

Հիվանդի պատասխանատվությունը հանդիսացող հաշվեկշիռները ներառում են հատկապա՝

- Անձամբ վճարում (առանց ապահովագրության հիվանդներ)
- Անձամբ վճարում ապահովագրությունից հետո (Ապահովագրությունը բավարարել է իր պատրավորությունը, և մնացյալ հաշվեկշիռի համար պատասխանատու է հիվանդը)
- Բարեգործական խնամք (Չեղջված վճարներ՝ հիմնված բարեգործական տոկոսանիշների վրա)
- Անձամբ Վճարում Medicare-ից հետո (Հիվանդի պատասխանատվությունը՝ ինչպես սահմանված է Medicare-ի կողմից)

Հայտարարագրի Ծրջափուլ

Բոլոր հիվանդների համար, հայտարարագիրը փոստով ուղարկվում է հաշվեկշիռը հիվանդի պատասխանատվությունը դառնալուց հինգ օր հետո:

Բոլոր հիվանդների համար ընդհանուր հաշվի ներկայացման ցիկլը կազմում է 120 օր՝ նախքան հաշվեկշիռը կուղարկվի հավաքագրման: Հայտարարագիրը ուղարկվում է հիվանդին՝ ապահովագրությունը իր մասը բավարարելուց հետո, եթե կիրառելի է: Եթե հիվանդի ժամկետանց պատասխանատվությունը չի հավաքագրվում մինչև նշանակված օրը, հիվանդը կշարունակի ստանալ համապատասխան հայտարարագրեր (ընդամենը մինչև 5): Եթե դեռևս վճարում չի ստացվել, գումարը կուղարկվի հավաքագրման գործակալություն:

Իրենց հաշվեկշռի մասին հարցերով հիվանդները կարող են զանգահարել Հաճախորդների սպասարկման բաժին՝ (866) 525-5557 հեռախոսահամարով, որպեսզի իմանան, թե արդյոք նրանք որակավորվում են վճարման պայմանավորվածության համար: Հիվանդներն, ովքեր ի վիճակի չեն վճարել, կարող են զանգահարել մեր Ֆինանսական Աջակցության բաժին՝ (201) 383-1043 հեռախոսահամարով:

Մատակարարներն՝ ըստ Բաժանմունքների, որոնք տրամադրում են Շտապ Օգնության կամ Բժշկական Տեսանկյունից Անհրաժեշտ այլ Առողջապահական Խնամքի Ծառայություններ Հիվանդանոցի հաստատությունում

Բաժանմունք/Անձ/Խումբ	Ապահովագրվա՞ծ է Ֆինանսական Աջակցության Քաղաքականությամբ:
Անեսթեզիոլոգիայի Բաժանմունք	Ոչ
Շտապ Ոգնության Բժշկության Բաժանմունք	Ոչ
Բժշկության Բաժանմունք	Ոչ
Մանկաբարձության և Մանկաբուժության Բաժանմունք	Ոչ
Վիրաբուժության Բաժանմունք	Ոչ
Ճառագայթաբանության Բաժանմունք	Ոչ
Սրտաբանության Բաժանմունք	Ոչ